


Դ 284

Ա. Ա. ԲԱԲԱՅԱՆ

ԲՈՄԲԱԿԵՆՈՒ ԳՈՄՈԶ
ՀԻՎԱՆԴԱՒԹՅՈՒՆԸ



ZUSMƏSZRAS

632

F-12

Ա. Ա. ԲԱԲԱՅԱՆ

Կ

ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ԳՈՄՈՋ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

2002

2011

ՀՐԵՎԱՆ ՀԱՅՈՒՏԱՐԱՑ

1942

19575

Հողժողկոմատի Աղբուժեխնիկայի և մեխանիզացիայի
վարչության հանձնաբարությամբ Բամբակաղործական
գիտա-հետազոտական կայանը ձեռնարկել է Հրատարակել
մի շարք դիտա-հանրամատչելի բրույուրներ, որոնց
թվում նաև ընկ. Ա. Բաբայանի սույն աշխատությունը:
Ներկա աշխատությունում ամփոփված են բամբակե-
նու գոմոզ հիվանդության վերաբերյալ Հայաստանի
Բամբակաղործական Գիտա-հետազոտական Կայանի, ինչ-
պես նաև մեր ռեօպլութիվայից գույս զանվոր ուրիշ
գիտա-հետազոտական ինստիտուտների և կայանների
կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունք
ները:

Հայաստանի Բամբակաղործական Գիտա-
հետազոտական Կայանի Գիտական Խոր-
հուրդ.

БІБЛІОТЕКА
АН УРСР



Կ 004-57

ԳՈՄՈԶ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՃԱՌԱԾ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԸ

Գոմոզը բամբակենու ամենատարածված հի-
վանդությունն է: Առաջին անգամ գոմոզը հայտա-
բերել և նկարագրել է 1891 թվին ամերի-
կացի գիտնական Ատլինսոնը: Հետագայում
պարզվել է, որ բամբակենու գոմոզը տարած-
ված է բամբակաղործական բոլոր երկրներում:
Սովետական Միության մեջ գոմոզը տարածված
է ինչպես հին, նույնպես և նոր բամբակաղոր-
ծական շրջաններում:

Սակայն, չնայած նրան, որ այս հիվան-
դությունը հանդիպում է ամենուրեք, ուր բամ-
բակենի է մշակվում, այնուամենայնիվ բոլոր
շրջաններում էլ նա միևնույն տնտեսական

նշանակությունը չունի: Բամբակագործությանը
գոմողի պատճառած վասսի չափը պայմանագործ
ված է մի կողմից տվյալ շրջանի կլիմայական
պայմանների առանձնահատկություններով, իսկ
մյուս կողմից՝ հիվանդության հանդեպ այդ վայ-
րում մշակվող բամբակենու սորտերի դիմաց-
կունության աստիճանով: Օդի բարձր խոնավու-
թյունը և տեղումների առատությունը նպաս-
տում են այս հիվանդության զարգացմանը:

Այդ է պատճառը, որ գոմողն անհամեմատ
ավելի շատ է տարածված և մեծ վասս է պատ-
ճառում նոր բամբակագործական շրջաններում՝
Հյուսիսային Կովկասում և հատկապես Ուկրաինա-
յում, ուր վեգետացիայի ընթացքում հաճախակի
անձրեները նպաստում են հիվանդության տա-
րածմանը և ինտենսիվ զարգացմանը:

Սովետական Միության գյուղատնտեսության
մեջ այս հիվանդությունը, որպես բացասական
գործոն, առանձնակի նշանակություն ունի նաև
այն շրջաններում, ուր արժեքագործ երկարաթել
եղիպտական բամբակենու սորտեր են մշակվում
և ուր օդերևութաբանական պայմանները նը-

պաստավոր են գոմողի զարգացման համար; ինչ-
պես, օրինակ՝ Ադրբեյջանում և՛ Տաջիկական Ռես-
պուբլիկայի որոշ շրջաններում:

Մեր մոտ՝ Սովետական Հայաստանում գո-
մողն ամեն տարի երկան է գալիս բամբակե-
նու ցանքերում, բայց նրա տարածման չափը և
բույսերի վարակվածության աստիճանն ըստ վե-
գետացիոն տարիների և այդ տարիների առանձին
ամիսների՝ տարբեր լինում, նայած օդերևու-
թաբանական պայմաններին: Անձրևային տա-
րիներին հիվանդությունն ավելի շատ է նկատ-
վում, քան չորային տարիներին: Մյուս կող-
մից, եթե հիվանդության գեմ պայքարի միջո-
ցառումները լրիվ, եր ժամանակին և որակով են
կիրառվում, անգամ անձրևային եղանակներ լի-
նելու դեպքում հիվանդությունն աննշան չափե-
րով է նկատվում:

Գոմողը բամբակագործությանը մեծ վնաս է
հասցնում: Ամերիկան տվյալների համաձայն՝
Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգնե-
րում հիվանդության ազդեցությունից բամբա-
կենու բերքի տարեկան կորուսը կազմում է
ընդհանուր բերքի 2,4%: Սովետական Միության


մեջ 1933 թվին, երբ գոմոզի դեմ դեռ ևս պայմանակար չէր մղվում, այս հիվանդությունից ըամբակենու բերքի միջին կորուստը կազմում էր ամբողջ Միության ընդհանուր բերքի $4,4^0/0$ -ը:

Բամբակենու բերքի բարձրացման համար, գոմոզի դեմ մղվող պայմանը կարեռ դեր է խաղում: Դրա համար հասկանալի է, որ բամբակադործական շրջանների աղբուզի բազուկը և բամբակագործ կոլտնտեսականները պետք է լավ պատկերացնեն գոմոզ հիվանդությունը և նրա դեմ պայմանակենու միջոցառումները:

ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԱՐՏՍՐԱԿԻՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Բամբակենին գոմոզով հիվանդանում է իր աճման բոլոր հասակներում, սկսած այն ժամանակից, երբ սերմից գուրս են գալիս սերմաշառքիային տերեները և մինչև կնդուզի բացվելը: Հիվանդանում են բույսի գրեթե բոլոր մասերը՝ սերմաշաքիլային տերեները, սովորական տերեները, տերեսակոթունը, ցողունները, կնդուզները, կնդուզակոթունը, ծաղկակիցները և թելը:

Գոմոզի նշանները բույսի բոլոր մասերի վրա




Նկ. 1. Գոմոզով պարակած սերմաշաքիլային տերեները:

ընդհանուր առմամբ միատեսակ են, հիվանդացած մասերը ծածկվում են յուղային, անկյունավոր, կլոր կամ երկարավուն բծերով: Այսպես, օրինակ, երբ բույսը դեռևս զտնվում է մատղաշ հասակում, վարակված սիրմաշաքիլային տերեների վրա երեսում են կլոր, յուղային, թափանցիկ, այնուհետև գորշացող ու չորացող բծեր (նկ. 1): Ուժեղ վարակվածության դեպքում շաքիլներն ընկնում են, և բույսը, եթե դեռևս չի կարողացել խակական տերեներ կազմել մհնում է:

Հիվանդացած տերեների վրա բծերը լինում են անկյունավոր, իսկ եթե վարակված են տերեների ջղերը՝ երկարավուն (նկ. 2): Ուժեղ վարակվելու դեպքում տերեները թափվում են: Բամբակենու տերեները մեր պայմաններում վարակվում են ամենից շատ ամառվա կեսերին. սկզբում հիվանդությունը նկատվում է բույսի ստորին տերեների վրա, իսկ այնուհետև հիվանդանում են նաև միջին և վերին տերեները:

Հիվանդությունը ցողունների վրա, որը մեր պայմաններում գոմոզի ամենամսասարեր ձեւ է, հանդես է գալիս ամառվա կեսերին, սովորա-




Նկ. 2. Գոմոզով վարակված տերեները:

բար հունիսի վերջերին կամ հուլիս ամսում: Հազվագյուտ դեպքերում բույսի ցողունը մեզ մոտ վարակվում է նաև մատղաշ հասակում:

Ցողունային գոմոզով հիվանդ բույսերը գաշտում դեռ հեռվից աչքի են ընկնում. սովորաբար նրանք շրջապատող բույսերից ցածր են լինում, որովհետև միջնադրուցային տարածությունները կարճ են մնում և դրա համար էլ տերեները դասավորված են լինում ավելի խիտ,

քան առողջ բույսերինը: Հաճախ տերեւները՝ հատկապես ստորինները, մասամբ կորցնում են կանաչ գույնը և դառնում են դեղին ու քիչ կարմրավուն:

Ցողունի հիվանդացած մասը սեանում, մուգ դույն է ստանում ու արտաքուստ փայլուն է դառնում, այնուհետեւ ցողունի այլ մասը հետպահում է բարակում, դյուրաբեկ է դառնում և չը-




Նկ. 3. Գոմողով վարակված ցողունները:

կարողանալով պահել բույսի ծանրությունը՝ կոտրվում է ու մեռնում (նկ. 3):

Ցողունի վարակված տեղի վերին մասը հաճախ որոշ չափով հաստանում է: Երբեմն վարակված ցողունը ծովում է, կամ թե առողջանում է, բայց և այնպես աճման ընթացքում, առողջ բույսերի համեմատությամբ, որոշ չափով հետ է մնում:

Վարակված կանաչ կնդուղների վրա նույնպես նկատվում են յուղային, կլոր բծեր. հաճախ նրանք իրար միանալով՝ ծածկում են ամբողջ կնդուղը: Այսպիսի զեղքերում կնդուղը փչանում է (նկ. 4):

Եթե կնդուղների վրա գոյանում են միմիայն առանձին բծեր, կնդուղները լիովին չեն փշանում, այլ վարակված մասերն աստիճանաբար խորանում են և հիվանդությունը մինչև թելն է հասնում: Դրա հետևանքով թելը դեղնա-դարչնագույն է դառնում, առանձին թելերն իրար են կպչում և չեն բացվում: Հիվանդ կնդուղները կամ բոլորովին չեն բացվում կամ թե բացվում են թերի: Հաճախ գոմողով վարակվում է կնդուղի կոթը: Այս ձևով հիվանդության երևան



Նկ. 4. Գոմոզով վարակված կնքուղը:

գալը խիստ վնասակար է, որովհետեւ ուժեղ վարակման դեպքում կնքուղնիրը թափվում էն կամ հիվանդությունը կնքուղի կոթից հեշտությամբ անցնում է կնքուղի խորքը և վարակում է թելն ու սերմը:


Վերը հիշված վարակվածության բոլոր ձևերի գեկքում էլ բույսի հիվանդացած մասերում կարող են երևան գալ մածուցիկ հեղուկի կաթիլներ, որոնք որոշ ժամանակից հետո չորանում և կպած են մնում վարակված մասերին:

Մածուցիկ հեղուկի երևան գալու հատևանքով այդ հիվանդությունը ստացել է գոմոզ անունը, որը նշանակում է խեժային հիվանդություն կամ խեժահոսում:

ԳՈՄՈԶԻ ՀԱՐՈՒՑԻՉԸ ԵՎ ԱՐՏՍՎԲԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Բամբակենու զոմոզը հարուցում է հատուկ մի բակտերիա (*Bacterium malvacearum*), որն այլ կուլտուրական բույսերին չի անցնում: Բակտերիաները, ինչպիս հայտնի է, շատ փոքրիկ էակներ են և նրանց կարելի է տեսնել միմիայն

մանրադիտակով (նկ. 5): Բակտերիաները բույշ սի ներսն են ընկնում տերեների վրա գտնված սի ներսն են ընկնում տերեների վրա գտնված հատուկ անցքերից, որոնք կոչվում են հերձանցք ներ, կամ թե՛ զանազան տեսակ միջատների առաջացրած վնասվածքներից:



Նկ. 5. Գոմոլ առաջացնող բակտերիաները (Bacterium malvacearum) 1000 անգամ մեծացրած:

Թափանցելով բույսի հյուսվածքի մեջ՝ բաւտերիաները սնվում են նրանց հաշվին և արագորեն բարձմանում: Դրա հետևանքով բույսի հիվանդացած մասերի հյուսվածքները քայլացած մասերի հյուսվածքները քայլացած:

վում են և երեան են գալիս վերը նկարագրված բծերը:

Բույսի վարակված մասերում նկատված մածուցիկ նյութն իրենից ներկայացնում է բակտերիաների կուտակում, որը բաղկացած է առանձին բակտերիաների անթիվ քանակից: Այդ բակտերիաներն իրենց թիթեռներում պատճառով օդի շարժման, քամու, անձրեի և այլ միջոցներով տարածվում են զաշում և վարակում են նորանոր բույսեր:

Հիվանդություն առաջացնող բակտերիաները մեծ դիմացկունություն են ցուցաբերում ցածր ջերմաստիճանի հանգեց, նրանք գիմանում են մինչև մինուս 28° և ավելի ցրտի: Պակաս չէ չոմողի բակտերիաների գիմացկունությունը նաև բարձր ջերմաստիճանի հանգեց, այսաեղ նրանց կենսունակությունը պահպանվում է մինչև $50-55^{\circ}$ խոնավ պայմաններում և 90° չոր պայմաններում: Լարորատորական պայմաններում պահված բամբակենու վարակված, չոր աերենի բույսի բակտերիաների կենսունակությունը պահպանվում է չորս և ավելի տարի:

Դաշտում դոմողով վարակված սերմեր ցա-

նելու գեղքում ստացված մատղաշ բույսերի
 սերմաշաքիլային տերեները վարակված են լի-
 նում հիվանդությունով: Այնուհետև այդպիսի
 սերմաշաքիլային տերեների վարակված բժերից
 և բերքի մնացորդների վարակված մասերից
 բակտերիաներն օդի հոսանքներով կամ միջատ-
 վակտերային միջոցով ընկնում են նոր տերեների վրա
 ների միջոցով ընկնում են նոր տերեների վրա
 և վարակում են նրանց: Որպեսզի այս բակտե-
 րիաները կարողանան թափանցել տերեների
 հյուսվածքի մեջ, առաջ բերեն վարակում և
 կազմեն բակտերային նոր բժեր, անհրաժեշտ է
 խոնավություն (առատ ցող, անձրե), ինչպես
 նաև օդի համապատասխան ջերմաստիճան: Այդ-
 պիսի վարակման համար ամենից լավ ջերմաս-
 տիճան հանդիսանում է $25-30^{\circ}$, որի ժամանակ
 վարակումից $5-8$ օր հետո հիվանդության
 նշաններն արտահայտվում են:

Բույսի հետազա վարակումը համապատաս-
 խան ջերմաստիճանի առկայության գեղքում
 է չկատարվել, եթե անձրեն կամ ցող չլի-
 կարող է չկատարվել, եթե անձրեն կամ ցող չլի-
 կարող է չկատարվել: Արարատյան գաշտավայրի պայմաններում
 նի: Արարատյան գաշտավայրի պայմաններում
 չնորհիվ այն բանի, որ ամուսն երկրորդ կիսին
 արդումներ գրեթե չեն լինում, գոմոզի զարգա-

ցումը կանգ է առնում, տերեների վրայի բակ-
 տերային բժերը մուզ գույն են ստանում, իսկ
 թույլ վարակված գեղքում նրանք առողջանում
 են և համարյա թե անհետանում: տերեների
 վրա նոր, թարմ վարակված մասեր չեն նկատ-
 վում: Տեղումների առկայության գեղքում, մին-
 չե կնպուզների բացվելը, այդպիսի թարմ, յու-
 ղով ծավածի նման բժերը նորից երեան են գա-
 լիս բույսերի օրգանների վրա: Այդ շրջանումն
 է, որ հաճախ վարակվում են ծաղկակիցները,
 կնպուզների, որից հիվանդությունն անցնում
 է բամբակի թելին և սերմին:

Հիմ.ԱՆԴՐԻԹՅԱՆ ՏԱՐԵՑ-ՏԱՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՈՒ-
 ՂԻՆԵՐԻ

Ինչպես վերն ասվեց, գոմոզ առաջացնող բակտե-
 րիաները չափազանց զիմացկուն են ցածր ջեր-
 մաստիճանի հանդեպ և զրա շնորհիվ ձմռան ըն-
 թացքում և ավելի ուշ մինչև նոր ցանք կատա-
 րելը պահպանվում է նրանց կենսունակությունը
 բամբակի սերմերի վրա կամ նրանց մեջ:
 Բակտերիաները նաև կենսունակ են մնում մինչև



գարուն՝ բերքահավաքից հետո բամբակենու
վարակված փայտացած մասերի՝ ցողունի, հյու-
ղերի մեջ: Զրում, խոնավ հողում և բույսի փտած
մնացորդներում բակտերիաները ոչնչանում են:
Սառիւ մենք կանգ կառնենք այս հարցերից
յուրաքանչյուրի վրա առանձին-առանձին:

ա) Գոմոզի փոխանցումը սերմերով

Հիվանդություն առաջացնող բակտերիաները
սերմերի վրա ընկնում են զանազան ճանապարհ-
ներով: Բույսի վարակված օրգաններից՝ տերե-
ներից, ցողուններից՝ և այլ մասերից բակտե-
րիաներն ընկնում են բացվող կնքուղի թելի վրա
և այնտեղից՝ սերմի վրա: Վարակվ սերմերի վրա
տարածելու գործում, սերմը մաքրելիս, "չ
պակաս դեր են խաղում բամբակազտիչ գոր-
ծարանների ջիները: Վարակված հումույթի զը-
տումից հետո ջիների վրա մնում են փոշու և լին-
տերի հետ միասին մեծ քանակությամբ բակ-
տերիաներ և նրանք նոտում են նաև այն սեր-
մերի վրա, որոնք ստացվել են գոմոզից աղատ
հողամասերի բերքից:

Այդ բոլոր դեպքերում սերմերը վարակված
են լինում արտաքինից: Այն դեպքերում, եթե
կնգուղների կազմակերպման շրջանում անձրե-
վային եղանակներ են լինում կամ բույսի վրա
գիշերներն առատ ցող է նստում, գոմոզով վա-
րակվում են բամբակենու ծաղկակիցները, իսկ
այդտեղից վարակվ կենգուղակոթով անցնում է
սերմերին և թելին: Վերջին դեպքում սերմերը
վարակված են լինում նաև ներքուստ: Այդ ձևով
վարակված սերմերն առողջների հետ համեմատած
սովորաբար նվազ են լինում և պակաս ծլու-
նակություն են ունենում: Զրում թրջելիս ներ-
քուստ վարակված նվազ սերմերը չեն խորա-
սուզվում ինչպես առողջները, այլ մնում են ջրի
երիսխն:

Մեր բամբակագործական շրջաններում քիչ
նպաստավոր պայմաններ կան բամբակի սեր-
մերի ներքին վարակվածության համար: Կըն-
դուղների առաջացման շրջանում, հատկապես
օգոստոսի վերջերին և սեպտեմբեր ամսում, եթե
վարակման համար առկա է լինում նպաստավոր
ջերմաստիճանը, սովորաբար չորային եղանակ-
ներ են լինում և բամբակենու ծաղկակիցներն

ու հնգուղակոթերն աղատ են մնում վարակումից,
որի շնորհիվ սերմերը ներքուստ չեն վարակվում:
Բացառիկ տարիներ են լինում, երբ այդ շրջա-
նում անձրեներ են զալիս և նպաստում են
բակտերիաների՝ սերմերի մեջ թափանցելուն:

Սերմերի ներքին վարակվածությունը
զգալի տոկոս է կազմում նոր բամբակագործական
շրջաններում, հատկապես Ուկրաինայում, ուր
բամբակի հնգուղակալման շրջանում հաճախակի
անձրեներ են տեղում:

Գործնական տեսակետից սերմերի արտաքին
և ներքին վարակվածությունը միենույն նշա-
նակությունը չունեն: Գոմովի դեմք քիմիական
նյութերով սերմերի ախտահանումը ոչնչացնում
է արտաքին վարակվածությունը, այնինչ սերմե-
րի մեջ գտնվող բակտերիաների վրա սովորաբար
չի ազդում, այդ պատճառով պետք է միջոցներ
ձեռք առնել, որպեսզի ներքուստ վարակված
սերմերը բերքահավաքի ժամանակ խոտանվեն
և իբրև սերմացու չօգտագործվին: Այդ մասին
կխոսվի առանձին:

բ) Գոմօգի փոխանցումը դաշտում եիվանդ
բույսերի մնացորդներով

Տարեցատարի գոմով հիվանդության փոխանց-
ման գործում, բացի սերմերից, խոշոր նշա-
նակություն ունեն նաև բերքահավաքից հետո
դաշտում թողնված հիվանդ բույսերի մնացորդ-
ները:

Վերջին տարիների մի շարք ուսումնասիրու-
թյունները ցույց են տվել, որ դաշտում գոմովի
բակտերիաները հաջողությամբ ձմեռում են
բամբակենու վարակված ցողունների մեջ: Բամ-
բակենու ցողունը փայտացած լինելով՝ դանդա-
ղությամբ է քայլքայլում միջավայրի պայման-
ների ազդեցության տակ և դրա շնորհիվ նրա
հյուսվածքում եղած բակտերիաների կենսունա-
կությունը երկար է պահպանվում: Գոմով առա-
ջացնազ բակտերիաները հանդիսանալով կենդանի
էակներ՝ ոչ միայն ենթարկվում են շրջապա-
տի ջերմության պայմանների ազդեցությանը,
այլև այդ բակտերիաների գիմացկունությունը
կախում ունի նաև նրանց շրջապատող տարրեր
միկրոօրգանիզմների գործունեությունից:

Այդ պատճառով, նայած թե գոմոզով վարկված ցողունները դաշտում ինչ վիճակում են, բայց այս այսման մեջ նրանցում մինչև գարուն գտնվում, ըստ այսմ էլ նրանցում մինչև գարուն կենսունակ մնացած բակտերիաների քանակը կենսունակ մնացած բակտերիաների քանակը առարկեր է լինում: Ստորև գետեղված աղյուսատարբեր էլեկտրական համապատասխան տվյալներ կում բերված են համապատասխան տվյալներ մասին:

Գոմոզով վարակված ցողունների պահպանման ձեր բերքահավաքից հետո	Գարնանը, ցանքի սկզբին, կենսունակ բակտերիաներով ցողունների 0°ը
1. Լաբորատորիայում, չոր գըրությամբ	100
2. Դաշտում, կանգուն վիճակում	70
3. Դաշտում, հողի երեսին փռած	50
4. Դաշտում, աշնանը վարած հողում	30
5. Դաշտում, աշնանը վարած և չբած հողում	10

Այս տվյալները ցույց են տալիս, որ դաշտային պայմաններում բակտերիաներն ամենից շատ պահպանվում են կանգուն վիճակում մնացած ցողունների մեջ և ամենից քիչ երբ այդ ցողուններն աշնան վարի միջոցով թաղվում են հողի մեջ ու անմիջապես ջրվում: Դրա պատճառը այն է, որ հողում գոմոզով բակտերիաները մեծ չափով ենթարկվում են այնտեղ եղած այլ միկրօրգանիզմների կործանարար աղեցությանը:

Փորձով ապացուցված է, որ գոմոզ առաջացնող բակտերիաները խոնավ և չախտահանված հողում ոչնչանում են 30° օրից ոչ ուշ: Առվի ջրում բակտերիաները 30° ջերմությունում ոչնչանում են 24 ժամից հետո, իսկ 17° ուռում՝ 96 ժամից հետո: Առվի ջուրն իր մեջ պարունակում է այնպիսի էակներ, որոնք ոչնչացնում են գոմոզ առաջացնող բակտերիաներին:

Սակայն թե հողում և թե ջրում ջերմաստիճանի ցածր լինելու դեպքում ($4-5^{\circ}$ և ավելի ցածր), այնտեղ եղած գոմոզով վարակված բամբակենու մնացորդներում բակտերիաների կենսունակությունն անհամեմատ երկար ժամանակ

է պահպանվում շնորհիվ այն հանգամանքի, որ ցածր ջերմաստիճանը թուլացնում կամ գաղաւ-
րիցնում է գոմոզին անտաղոնիստ (թշնամի) միկ-
րոօրգանիզմների կենսագործունեությունը: Այդ
է պատճառը, որ ձմռան ցուրտ պայմաններում,
բամբակենու վարակված մնացորդներում, հատ-
կապես փայտացած մասերում, բակտերիաների
կենսունակությունը պահպանվում է երկար ժա-
մանակ:

Բամբակենու վեգետացիայի ընթացքում
գոմոզով վարակվածությունն արտահայտվում է
երկու ձևով՝ առաջնային և երկրորդային: Ա-
ռաջնային վարակվածություն ասելով հասկաց-
վում են այն գեղղերը, երբ հիվանդությունը
նախորդ տարվանից փոխանցվում է վարակված
սերմերի միջոցով և գոմոզի նշաններն արտա-
հայտվում են մատղաշ ըույսերի թարմ սերմա-
շաքիլային տերեների վրա:

Երկրորդային վարակվածությունն արտա-
հայտվում է հետազում ըույսի զանազան օր-
գանների վրա և նրանց վարակի աղբյուր են
հանդիսանում նույն սերմաշաքիլային տերեների
վրա առաջնային վարակումից առաջացած գո-

մոզային բծերը և գաշտում բամբակենու վարակ-
ված մնացորդներում կենսունակությունը պահ-
պանած բակտերիաները: Երկրորդային վարա-
կումը տեղի ունենալու համար անպայման
անհրաժեշտ է անձրևի կամ ցողի կաթիլների
տոկայությունը բույսի օրգանների վրա:

Հարկ է նշել, որ մեծ մասամբ առաջնային
վարակվածության շնորհիվ է, որ գոմոզը սերմա-
շաքիլային տերեների կոթունով անցնում է
ցողունին և հաճախ բույսի ոչնչացման պատճառ
դառնում:

ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ, ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈ-
ՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԳՈՄՈԶԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ԳՈՐ-
ԾՈՒՄ

Ագրոտեխնիկական միջոցառումները,
հատկապես ցրտահերկը, պարաբտացումը, ժա-
մանակին նոսրացնելը կարևոր ֆակտորներ են,
որոնց կիրառումը զգալի չափով նպաստում է գո-
մոզի դեմ պայքարելու գործին:

Նախորդ գլուխում մատնանշվեց, որ գոմոզ
հարուցող բակտերիաները խոնավ հողում որոշ

Ժամանակից հետո ոչնչանում են: Որքան արտզ
են քայքայվում բերքահավաքից հետո զաշտում
մնացած բամբակենու հիվանդ մասերը, այնքան
ավելի շատ են այդ մասերից բակտերիաներն
ընկնում հողի մեջ և ոչնչանում այնտեղ եղած
միկրոբանիզմների ազգեցության տակ: Ցրտա-
հերկը մեծ չափով նպաստում է այդ պլոցիների
արագացմանը, որովհետեւ բամբակենու հիվանդ
մնացորդներն ընկնում են հողի մեջ, իսկ այդ-
պիսի հերկված հողում երկար ժամանակ է մնում
և նպաստավոր պայմաններ են ստեղծվում,
որպեսզի բույսի մնացորդները լրիվ քայքայվեն
և նրանց մեջ եղած գոմոզի բակտերիաները
ենթարկվեն հողում եղած միկրոբանիզմների
կործանաբար ազգեցությանը:

Ազգութեանիկական մյուս միջոցառումը՝
ազոտային պարաբանյութերի գործադրումը,
բարենպատ ձեռվանդաստ գործառնալով բամբակենու
և ճեղողության և բերքատվության բարձրացման
վրա՝ միաժամանակ որոշ չափով թուլացնում է
գոմոզի զարգացումը:

Գոմոզի զարգացման և տարածման դեմ
առնելու տեսակետից չափազանց կարևոր միջո-

ցառում է հանդիսանում բամբակի ցանքերն իր
ժամանակին նոսրացնելը: Ուշ նոսրացնելու
դեպքում բույսերը շատ թույլ են զարգանում,
նրանք իրար հետ սերտ շփման մեջ են լինում,
որի հետեւանքով ստեղծվում է վարակմանը
նպաստող խոնավություն և սովոր:

Նոսրացման ժամանակ պետք է առաջին
հերթին հեռացնել գոմոզով հիվանդ բույսերը:
Առաջին նոսրացումը կատարում են այն ժա-
մանակ, երբ ցանքը լրիվ կերպով ծլել է և առա-
ջացրել է սերմաշաքիլային տերեները: Երկրորդ
նոսրացումը կատարում են բամբակենու երկրորդ
խական տերեկի առաջացման շրջանում: Թե՛ ա-
ռաջին և թե՛ երկրորդ նոսրացման ժամանակ բոլոր
հեռացված բույսերը լցնում են գոգնոցների մեջ,
զաշտից զուբս են հանում և թաղում են հողի
մեջ 20 ամ խորությամբ, որպեսզի գոմոզի բակ-
տերիաները նորից չտարածվեն ցանքի մեջ ու
չվարակեն բամբակենուն:

Նույն ձեռվ զաշտից հանում են ծերատումի
հետեւանքով բամբակենու հեռացված մասերը և
թաղում են հողում կտմ օգագործում են որպես
անասունների կեր: Այդպես են վարվում նաև

վեգետացիայի ընթացքում գոմոզի պատճառով
մեռած բույսերի հետ:

Գոմոզի դեմ պայքարի նախազգուշական կարե-
վոր միջոցառութեներից մեկն է հանդիսանում
առողջ սերմացու ստանալը՝ Այդ հանգամանքը
հարկավոր է հաշվի առնել բերքահավաքի ժա-
մանակ և գոմոզով հիվանդ կնքուղների վարակ-
ված հումույթը պետք է առանձնացնել և իրակ-
սերմացու խոտանել: Վարակված կնքուղների
բամբակն աչքի է ընկնում նրանով, որ դժվա-
րությամբ է հանվում կնքուղի բներից. կնքուղի
հիմքի մասում գտնվող բամբակի դույնը դարչ-
նազույն է լինում և թելը սոսնձվածի նման՝ չի
լրացվում:

Որպեսզի գոմոզի վարակը դաշտում հիվանդ
բույսերի միջոցով չփոխանցվի հաջորդ տարին,
հարկավոր է բերքահավաքից հետո բամբակի
բոլոր բույսերն արմատահան անել և օգտագործել
որպես վառելիք: Դաշտում թափված բամբակենու
մանը մնացորդներում գտնվող բակտերիաները
ոչնչացվում են ցրտահերկի միջոցով: Եթե վա-
ղաժամ սկսված ցրտերը խանգարել են բամբակի
բոլոր հողամասերում բերքահավաքից մնացած

բույսերն աշնանը հեռացնելուն, ապա այդ պիտք
է կատարել հաջորդ տարվա վաղ գարնանը:

ՍԵՐՄԵՐԻ ԱԽՏԱՀԱՆՈՒՄԸ ԳՈՄՈԶԻ ԴԵՄ

Հիվանդությունը տարեց-տարի փոխանցվե-
լու խնդրին նվիրված զլիտում խոսվեց այն մա-
սին, որ բամբակի սերմերը հիմնական միջոց
են հանդիսանում գոմոզի փոխանցման գործում,
նամանավանդ, որ վարակված սերմերը հաճախ
պայմանավորում են բույսի ցողունի հիվան-
դանալը, որը ցանքի նոսրացման պատճառ կա-
զուղ է հանդիսանալ:

Այդ բանից խուսափելու համար, բամբակի
սերմերը նախքան ցանելն ախտահանում են
գոմոզի բակտերիաների նկատմամբ թունավոր
հասկություն ունեցող քիմիական նյութերից
որևէ մեկով: Այդ նյութերից ամենից լավ ար-
դյունք է ավել և հեշտ կիրառելի է ֆորմալի-
նը, որը վիրջին տարիներս օգտագործվում է
Սովետական Միության մեջ բամբակի սերմերի
ախտահանման համար:

Իբրև ախտահանող նյութեր՝ դրական ար-
դյունքներ են ավել նաև ծծմբական թիւուն

(իսկու վիճակում և ջրով թուլացրած), «ԱԲ» փուշի պրեպարատը, պղնձի արջասպի լուծույթը և այն: Բայց այդ նյութերից առաջին երկուսն իրենց էֆեկտությամբ որոշ չափով զիջում են ֆորմալինին, ուստի գրանք չներդրվեցին արտադրության մեջ:

ՍԵՐՄԵՐԻ ԱԽՏԱՀԱՌՆՈՒՄԸ ՖՈՐՄԱԼԻՆՈՒՄ^{*)}

Ֆորմալինն իրենից ներկայացնում է ֆորմալեհիդի ջրային լուծույթ: Ֆորմալեհիդի պարունակությունը լուծույթի մեջ, նայած ստացված ֆորմալինի պարախային, կազմում է 30–40%, ֆորմալինը սովորաբար թափանցիկ է, անգույն և սուր հոտով: Ցուրտ պայմաններում պահելիս ֆորմալինի մեջ առաջանում է սպիտակ, պղաոր, փաթիլանման նստվածք:

Ախտահանման համար գործածվող ֆորմալի-

^{*)} Այս գլխում հատվածները են բերվում բամբակի հիվանդությունների հետազոտության և պայքարի վերաբերյալ Միութենական Հոգժողկոմատի կողմից 1939 թվին հաստատված ոռուսիրեն հրահանդից, որի կազմելուն մասնակցել է նաև հեղինակը:

նը պետք է նստվածք չունենա իր մեջ, իսկ նստվածք ունենալու դեպքում պետք է նախառիս այն լուծել ստորև նկարագրված ձևերից մեկն ու մեկով:

ա) Նստվածք ունեցող ֆորմալինը նախապես խառնելով՝ նբանից քիչ լցնում են շնի մեջ և դնում են գոլ ջրով պղնձի մեջ ու տաքացնում, բայց ոչ այնքան, որ ջուրը եռաւ: Այդ ձևով նստվածք ունեցող ֆորմալինը տաքացնում են 3 ժամից ոչ ավելի:

բ) Եթե երեք ժամ անցնելուց հետո ֆորմալինի նստվածքը չի լուծվում, կամ լուծվում է մասնակիորեն, բայց սառելիս նորից գոյանում է, այդ գեղքում վերցնում են ֆորմալինից նոր նմուշ և նբան նույն չափով խառնում են մաքուր, պարզ ջուր, որից հետո նորից վերը նկարագրված ձևով տաքացնում են մինչև 3 ժամ տևողությամբ: Պետք է հիշել, որ վերջին ձևով լուծված ֆորմալինի խտությունը 2 անգամ պակաս կլինի, հետեւապես, սերմերի ախտահանման համար այդպիսի ֆորմալինից ոչ թե մեկ, այլ երկու բաժին պետք է վերցնել 100 բաժին ջրի համար:

գ) Եթե երկրորդ ձևով էլ չի հաջողվում
նստվածքը լուծել վերցնում են փորմալինի նոր
բաժին, օրինակ, 1 լիտր, և նրան ավելացնում
են 1 լիտր լվացքի սողայի լուծույթ. վերջինիս
պատրաստման համար մեկ լիտր ջրին վերցնում
են 8 գր սողա: Սողայի լուծույթով թուլացրած
փորմալինը 2—3 օր պահում են լավ տաքաց-
րած շենքում, մինչև որ նստվածքը լրիվ լուծվի:
Այս ձևով նստվածքը լուծելիս նույնպես փոր-
մալինի խտությունը 2 անգամ կպակասի, որը
պիտի նկատի առնել ախտահանման համար
լուծույթ պատրաստելիս և, հետեւապես, նոսրաց-
րած լուծույթից նախորդի նման երկու ան-
գամ ավելի պետք է վերցնել:

Ընտրելով նստվածքը լուծելու վերը նկա-
րագրված մեթոդներից մեկը՝ սկսում են լուծել
նստվածք ունեցող ամբողջ փորմալինը: Եթե
գրա համար հարկավոր է փորմալինը տաքաց-
նել այդ դեպքում վերջինս լցնում են մաքուր,
չժանգուած գույլերի մեջ և այդ գույլերը
դնում են տաք ջրով պղնձի մեջ: Դույլերի մեջ
նստվածքն ավելի շուտ է լուծվում, քան ապա-
կյա բալոններով պղնձի ջրի մեջ դնելիս, բացի

այդ, վերանում է տաքացնելու ժամանակ այդ
բարնաների ճաքելու վտանգը:

Թորմալինի նստվածքը դույլերում, բաց օ-
դում պետք է լուծել որպեսզի փորմալինն աշ-
խատողներին չվնասի:

Սերմերն ախտահանելու համար պետք է
իմանալ փորմալինի մեջ պարունակվող փոր-
մալինիդի տոկոսը, որը նախապես սուլիդիդային
մեթոդով քիմիական անալիզի միջոցով պարզում
է Սելինոգնարը և այդ տվյալները փակցնում է
կոլտնաեսություններին բաշխվող փորմալինի
բալոններին:

Ֆորմալիդեհիդի տոկոսը կարելի է որոշել նաև
տնտեսությունում, եթե ձեռք է բերված արեո-
մետր (խտաչափ): Ամենից լավ է զրա համար
գործածել 1,000-ից մինչև 1,200 բաժանում ունե-
ցող արեոմետր, բայց կարելի է օգտագործել
նաև 1,000-ից մինչև 1,500 բաժանում ունե-
ցողները:

Արեոմետրի օգնությամբ որոշվում է փոր-
մալինի տեսակարար կշիռը, իսկ իմանալով լու-
ծույթի տեսակարար կշիռը՝ կարելի է ստորեւ
բերված աղյուսակի միջոցով որոշել թե տվյալ

տեսակաբար կշիռ ունեցող փորմալինը իր մեջ քանի տոկոս փորմալիկիդ է պարունակում։ Դրա համար փորմալինը լցնում են զլանաձև ապակյա ամանի՝ մենզուրկայի մեջ և զգուշությամբ նրա մեջ են իջնում արենմետրը։ Այն մոմենտից հետո, երբ արենմետրն այլևս չի շարժվում, նշանակում են արենմետրի այն բաժանումը՝ թիվը, որը գտնվում է հեղուկի մակերեսույթին հավասար։ Սխալ չգործելու համար պետք է աշխատել, որ արենմետրը հեղուկի մեջ-տեղում լինի և ոչ թե մենզուրկայի պատին կպչի։ Ստացված թիվը կլինի հեղուկի տեսակաբար կշիռը։

Տեսակաբար կշիռը որոշելիս հեղուկը պետք է ունենա 18—20 աստիճան ջերմություն։
Տեսակաբար կշիռն ֆորմալիկիդի $\%_0$ -ը (ըստ ըստ արենմետրի սուլֆիդային մեթոդի)

1,055	21,2
1,060	23,1
1,065	25,7
1,070	28,3
1,075	30,9
1,080	33,5
1,085	36,0
1,090	38,7
1,095	40,5
1,100	42,0

Ախտահանման համար փորմալինը պետք է ջրով թուլացնել։ Դրա համար ամեն մեկ լիտր $40^{\circ}/_0$ -ի փորմալինին ավելացնում են 100 լիտր ջուր։ Եթե փորմալինի մեջ փորմալիկիդի տունականական չափով ջուրը վերցնել համաձայն ստորև բերված աղյուսակի։

Ֆորմալիկիդի $\%_0$ -ը
Փորմալինի մեջ

Մեկ լիտր փորմալինը թուլացնելու համար պահանջվող ջրի քանակը լիտրերով

40	100
39	96
38	94
37	91
36	89
35	87
34	84
33	82
32	79
31	77
30	75


Ամեն մեկ ցենտներ բամբակի սերմ ախտահանելու համար պահանջվում է վերուիշշալ ձևով պատրաստված փորմալինի թուլացը (բանդի վրական) լուծույթից 35—40 լիտր։ Այս հաշվով մեկ ցենտներ սերմացուի ախտահանման համար

պահանջվում է 3,5—4 կգ փորմալին: Բանվորական լուծույթն ախտահանման համար հաջորդօք չի կարելի օգտագործել:

Սերմերը պետք է ախտահանել ցանքից անմիջապես առաջ, որպեսզի նրանք երկար ժամանակ մնալով՝ նորից չվարակվեն գոմողի բակտերիաներով, որոնք կարող են փոխանցվել չախտահանված սերմերից, տարայից և այլն:

Ֆորմալինով սերմերն ախտահանում են երկու ձևով՝ ձեռքով—փայտյա տակառներում և կամ ՊՄ—1 կոչվող մեքենայով: Ստորև կնկարագրվեն ախտահանման այդ ձերնառանձինառանձին:

ա) Ախտահանումը ձեռքով կատարվում է փայտյա երկու տակառի մեջ, յուրաքանչյուրը 15—20 դույլ տարողությամբ: Տակառների կողքերին, հատակին մոռիկ, 2—3 ամ տրամագծով անցք են բացում և գրսից փակում են փայտյա խցանով: Բացի այդ, հարկավոր է մեկ տակառ և՛ փորմալինի լուծույթը նրա մեջ պատրաստելու և երկու դույլ՝ լուծույթը մեկ տակառից մյուսի մեջ տեղափոխելու համար:



Նկ. 6. Ախտահանման համար գործածվող տակառներ

Ներքեմից անցք ունեցող երկու տակառը դնում են իրար մոտիկ գետնից մոտ 40 սմ բարձրության վրա, այն հաշվով, որ հնարավոր լինի փորմալինի լուծույթը անցքով գատարկելիս նրա առջև դույլ կնել: Այդ տակառներից մեկի մեջ մինչև կեսը լցնում են բամբակի սերմերը և վրան ավելացնում են փորմալինի լուծույթը տակառի տարողության 3/4-ի չափ: Այսուհետեւ

սերմիրը փոքր թիակով լավ խառնում են մինչև
հավասար թրջվելը: Այդ մոմենտից սկսած մինչև
10 րոպէ լրանալը սերմերը պետք է անընդհատ
խառնել:

Ախտահանման ժամանակամիջոցը՝ 10 րոպեն
լրանալուց հետո տակառի ցածի անցքը բացում
են, նախապես դույլերից մեկը նրան մոտեցնե-
լով և արագորեն երկու դույլերի օգնությամբ
փոխեփոխ, առանց անցքը փակելու, փորմալինի
լուծույթը տեղափոխում են երկրորդ տակառի
մեջ: Այդ երկրորդ տակառում նույն ձեռվ ախտա-
հանում են նոր սերմեր, նախապես լուծույթի
ծավալը հասցնելով իր նախկին չափին, ավելաց-
նելով դրա համար երրորդ տակառում պատ-
րաստված փորմալինի լուծույթից:

Առաջին տակառի լուծույթը քամվելուց հետո
նրա միջից ախտահանված սերմացուն քթոցով
տեղափոխում և կույտի ձեռվ լցնում են նախա-
պես փորմալինի լուծույթով թրջված բրեղենտի
կամ բարդանի վրա և բոլոր կողմերից լավ ծած-
կում նրանցով: Ամեն մեկ կույտում լցնում են
մեկ ցենաներ սերմից ոչ ավելի: Կույտերում սեր-
մերը ծածկված վիճակում պահում են 3 ժամ,

սրը կոչվում է տամկացում: Այդ ժամանակամիջո-
ցում է, որ փորմալինի գոլորշիները ոչնչացնում են
գոմոզի բակտերիաներին: Եթե կույտերի ծածկոց-
ները Յ ժամվա ընթացքում սկսում են չորանալ,
նրանց պետք է նորից թրջել փորմալինի լու-
ծույթով:

Տմկացումից հետո սերմերը լցնում են ախտա-
հանված պարկերի մեջ և տեղափոխում դաշտ՝
ցանելու: Եթե սերմը ցանվելու է արաթ արված
հողում, ախտահանված սերմը պետք է թրջել:

Այն դեպքում, եթե չնախատեսված պատճառ-
ներով ախտահանված սերմը առանց ցանելու
պետք է պահել մեկ օրից ավելի, հարկավոր է
այն փոքը չորացնել բաց օդում, արևի տակ կամ
շենքում՝ նայած եղանակի պայմաններին: Չո-
րացնելիս սերմը պետք է հաճախակի խառնել:


Բ) Ախտահանումը ՊՄ-1 մեքենայով: Այդ
մեքենան ունի հետեւյալ կառուցվածքը: Մեքե-
նայի իրանին հագցված է լուծույթի շտեմարանը:
Լուծույթը շտեմարանում պետք է միշտ նույն
բարձրությունն ունենա, որը կատարվում է շտե-
մարանի մեջ եղած հսկիչ անցքի միջոցով: Այդ

անցքով դուրս է թափվում շահմարանում լցված ավելորդ լուծույթը: Իրանում թեք վիճակում դըրված է նաև շնեկը, որը վերջավորվում է տիտանանված սերմերի ընդունիչով:

Իրանի հետևում (Եթե նայելու լինենք թեի կողմից) դրված է սերմը լցնելու շերեփը, որը հատակում անցը ունի՝ իր կափարիչով: Շերեփում (նրա երկարությամբ) դրված է սերմը մատուցող անվերջ պառատակը: Շերեփի առջեի պատերն ամրացված են կրոնշատեյնին, որը պահում է փորձավինի լուծույթի շահմարանիկը: Այդ շահմարանիկը ծորակ ունի. ծորակից հեռանում են երկու խողովակ, որոնցից մեկը լուծույթը մատակարարում է փոշոտիչին (շերեփի ատկը դրված 5 անցքանի խողովակին), իսկ մյուսը՝ շնեկին մոտավորապես նրա մեջտեղը:


Իրանի առջեի մասին ամրացված է թել, որը շարժում են ձեռքով:

Մեքենայի աշխատանքը կայանում է հետեւյալում. ֆորմալինի լուծույթը լցնում են շահմարանիկի և շահմարանի մեջ, վերջինիս մեջ՝ մինչև անցքը: Սերմը լցնում են շերեփի մեջ և



Նկ. 7. ՊՄ-1 մեքենայի ընդհանուր տեսքը:
բացում են ցածի անցքի կափարիչն այն հաշվով,
որ շերեփից այնքան սերմ թափվի, որքան շնեկը
կարող է ընդունել: Ընդունիչոց կախում են
պարկերը: Այսուհետեւ մեքենայի թելը պտտեց-

Նույն են մեկ բոպեռում 60 պառույտի հաշվով:
Միաժամանակ շտեմարանիկի տակի ծորակը
բացում են այնքան, որ լուծույթը հոկիչ անցքով



Նկ. 8. ПУМ-1 մերենայի կարվածքն աշխատանքի ժամանակ.

1—իրանը, 2—շերեփը (կոչ), 4—սերմ մատուցող պառուտակը, 6—շտեմարանը, 9—շտեմարանիկը (բաշոկ), 10—ծորակը, 11—շնեկին լուծույթ մատակարարող խոզովակը,
12—փոշութչը:

հոսի բարակ շիթով: Շերեփից սերմերը թափ-
վում են շնեկի մեջ, ըստ որում ձանապարհին
նրանք թրջվում են փոշութչից խոզով լուծույթի
5 շիթով: Շնեկը քաշում է սերմերը շտեմարա-
նում գտնվող ավաղանի միջով և նրանց թափում
է ընդունիչի մեջ, ձանապարհին սերմերը նորից
թրջվում են լուծույթով, որը հոսում է շնեկի
պատյանի մեջտեղին ամրացված խոզովակից:

Ամեն մեկ բաժին սերմացուն ախտահանելու
համար մեքենայով պետք է անցկացնել երկու
անգամ, որից հետո այն պետք է ամկացնել 3
ժամ: Դրա համար ախտահանված սերմերով լըց-
րած պարկերը շարում են տախտակի վրա կողք-
կողքի և իրար վրա ու լավ ծածկում նախապես
փորմալինի լուծույթով թրջված բրենդենով կամ
զատարկ պարկերով:

Մեքենայով ախտահանված սերմերը կարելի
է ամկացնել նաև կույտերով, ըստ որում ամեն-
մեկ կույտում լցնում են այնքան սերմ, որքան
մեքենան ախտահանում է կես ժամում: Այդ
կույտերը ևս պետք է 3 ժամ պահել ծածկված
վիճակում:

Մեքենան աշխատեցնում են չորս հոգի՝ մեկը

սերմը լցնում է շերեփի մեջ, երկրորդը ախտահանված սերմերը տեղափոխում է տմկացման համար, երրորդը հետևում է մեքենայի շահմարանիկը լուծույթ լցնելուն և շերեփից սերմերի թափկելուն, չորրորդը պատում է մեքենայի թեր:

Նախքան ախտահանման աշխատանքներն սկսելը, հարկավոր է պատրաստ, մեքենային մոտիկ, ունենալ սերմը և ֆորմալինի լուծույթը, ինչպես նաև 4 դույլու պարկերի բերանը կապելու թեր:

Աշխատանքների ճիշտ գասավորման դեպքում մեքենան մեկ ժամում, նայած սերմերին, կըրկնակի անգամ ախտահանում է 350—500 կգ-ից ոչ պակաս: Մեկ տոննա սերմ երկու անգամ ախտահանելու համար ծախսվում է 300—350 լիտր ֆորմալինի բանվորական լուծույթ:

ԱԽՏԱՀԱՆՎԱԾ ՍԵՐՄԵՐԻ ՀԵՏՈԳՈ ՎԱՐԱԿՄԱՆ ԴԵՄՆ ԱՌԱՋԼՈՒ ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Որպեսզի ախտահանված սերմերը գոմոզի բակտերիաներով նորից չվարակվեն, անհրաժեշտ է, որ անպայման ախտահանված լինեն այն բոլոր

առարկաները, որոնք ախտահանված սերմերի հետ շփման մեջ են մանում մինչև նրանց ցանելը: Դրա համար ամբողջ տարան (պարկերը, բրեղենտները և այլն) պետք է թրջված լինեն ֆորմալինին¹⁾ լուծույթով (1 բաժին 40³) ոսոց ֆորմալինին 20 բաժին ջուր), որից հետո տարան որոշ ժամանակ պետք է փուլ ֆորմալինը հեռանալու համար:

Ճարքացան մեքենաները ցանքից առաջ հարկավոր է լվանալ ֆորմալինի նույն խտության (1^{1/20}) լուծույթով և ծածկել 2—3 ժամ ֆորմալինով թրջված բրեղենտով կամ պարկերով:

Կրկնացանքի կամ նոսր ցանքի նորոգման համար գործածվող սերմերը ևս անպայմանորեն պետք է ախտահանել:

ՍԵՐՄԵՐԻ ԱԽՏԱՀԱՆՎԱԾՆՈՒՄԸ ՊՂՆՁԻ ԱՐՁԱՍՊԻ ԼՈՒՆՈՒՅԹՈՎ,

Պղնձի արջասպի լուծույթով բամբակի սերմերի ախտահանումը 1942 թվին լայն արտադրական փորձի բնույթ է կրելու, որպեսզի մերկոլտնաեսությունները կարողանան տիրապետել նրանով սերմերի ախտահանման աշխատանք-

Ներին և հարկ եղած դեպքում փորմալինը պղզձի արջասպով փոխարինեն: Բանն այն է, որ փորմալինը մենք ստանում ենք Սովետական Միության կենտրոնական մարզերից, իսկ հայրենական պատերազմի պայմաններում անհրաժեշտ է, որ տրանսպորտի աշխատանքները թեթևանան, փորմալինն իրեւ այլ վայրից բերվող նյութ՝ փոխարինվի տեղական արդյունաբերությունից ստացվող ախտահանող նյութով, ինչպես, օրինակ՝ պղնձի արջասպով, որն արտադրվում է Սովետական Հայաստանում:

Պղնձի արջասպը լայն արտադրական պայմաններում իրեւ բարմբակի սերմերի ախտահանող նյութ չի ուսումնասիրվել այդ պատճառով 1942 թվի սեպտեմբերի ընթացքում մեր կոլտնտեսությունները պետք է երեան բերեն նրանով ախտահանելու դրական ու թերի կողմերը և աշխատեն վերացնել նկատված թերությունները:

Ախտահանումը կատարում են հետեյալ ձեռվ: Նախապես վայտյա տակառի մեջ պատրաստում են պղնձի արջասպի կես տոկոսանի լուծույթ, այսինքն՝ մեկ հարյուր լիտր ջրին վերցնում են կես կգ պղնձի արջասպ: Վերջինս արագ լուծվե-

լու համար նրան նախապես լավ մանրացնում են, տոպրակով կախում են տակառի ջրի մեջ, մի քանի անգամ թափահարում են և սպասում մինչև արջասպի մասնիկները լրիվ լուծվեն: 100 կգ բարմբակի սերմ ախտահանելու համար հարկավոր է պատրաստել 200—250 լիտր պղնձի արջասպի լուծույթ: Այդ լուծույթը գույլերի մեջ չի կարելի լցնել, որովհետև գույլերը կփշանան: Սերմերը պատրաստած լուծույթի մեջ լցնելուց հետո փայտով լավ խառնում են մինչև բոլոր սերմերի լրիվ թրջվելը և ապա նրանց լուծույթում պահում են 12 ժամ: Լուծույթի քանակն այնքան պետք է լինի, որ սերմերը 12 ժամվաքնիցքում նրանով անընդհատ ծածկված լինեն:

Անհրաժեշտ 12 ժամն անցնելուց հետո տակառի ցածի անցքը բացում են, լուծույթը հեռացնում և սերմերը քամում: Զի կարելի տակառի լուծույթում սերմերը պահել 12 ժամից ավելի, որովհետև նրանց ծլունակությունն այդ դեպքում կարող է ընկնել: Պղնձի արջասպով ամենից լավ է սերմերն ախտահանել երեկոյան ժամը 5—7-ը կամ քիչ ուշ, այն հաշվով, որ

հաջորդ առավոտը, 12 ժամը լրանալուց հետո,
սերմերը քամփեն և տեղափոխվեն դաշտ՝ ցա-
նելու:

Այդ ձևով ախտահանված սերմերը ցանելուց
հետո պետք է հողամասն անսրջապես ջրել: Ա-
րաթ արած հողերում պղնձի արջասպով ախ-
տահանված սերմերը ցանելու համար այլևս
թրջելու կարիք չկա, քանի որ ախտահանումը
միաժամանակ վոխարինում է սերմերը թրջե-
լու պրոցեսին:

Որպեսզի պղնձի արջասպով ախտահանված
սերմերը մինչև ցանելը նորից գոմոզի բակտե-
րիաներով չվարակվեն, պետք է կիրառել այն
բոլոր նախապուշական միջոցառումները, որոնք
հիշատակվեցին նախորդ դվյում:

ՍԵՐՄԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՅՎԱԾ ԱԽՏԱՀԱՆՄՈՒՄԸ ԲԱՄ-
ԲԱԿԱԶՑԻՉ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԱԽՏԱՀԱՆՄԱՆ
ՑԵԽՈՒՄ

Վերը նկարագրված մեթոդներով սերմերն
ախտահանվում են, ինչպես տեսանք, ցանքից
անմիջապես առաջ՝ կոլտնտեսություններում:

Սակայն լայն արտադրական պայմաններում
երբեմն նկատվում են առանձին հողամասեր,
մասսիվներ, ուր գոմոզը զգալի չափով տարած-
ված է լինում բամբակենու սերմաշաքիլների
վրա բույսի մատղաշ շրջանում: Դրա պատճառը
գլխավորակես անորակ ախտահանումն է, իսկ
ախտահանման պրոցեսի ցրվածության պատ-
ճառով, շատ հաճախ, հարկ եղած հսկողությունը
չի սահմանվում ախտահանման որակի վրա:

Սերմերի կենտրոնական ախտահանման
կտզմակերպումը բամբակագտիչ գործարաննե-
րում, նրանցում կառուցվելիք հատուկ ցեխերում
վերացնում է հիշյալ թերությունները: Այդպիսի
ախտահանման ցեխեր արդեն կառուցվել են
Աւգրեկտանի մի շարք բամբակագտիչ գոր-
ծարաններին կից: Մեզ մոտ, Սովետական Հա-
յատանում ևս, համաձայն վերադաս օրդանների
սրբածան, ախտահանման ցեխս պետք է ունենա-
Երևանի բամբակագտիչ գործարանը, որը պետք
է բավարարի մեր բոլոր բամբակաղործական
շրջանների սերմերի պահանջը: Ներկայումս
այդ ցեխը հիմնականում կառուցված է, բայց
հայրենական պատերազմի կապակցությամբ


անհրաժեշտ կահավորումը չստանալու պատճառով առաջժմ գործի չի գրված:

Ախտահանման ցեխի աշխատանքները կատարվում են հետեւյալ ձևով: Բամբակի սերմերը, որոնք սովորաբար կարծ թելով (լինտերով) են պատված, լցվում են այսպես կոչված «Արիդոն» մեքենայի մեջ, ուր նրանք խիստ ծծմբաթթվեալ պղղեցության տակ մերկանում (լինտերահանվում) և ախտահանվում են: Այդ սերմերը լվացվելուց հետո լրացուցիչ ձևով ախտահանվում են ֆորմալինի լուծույթով՝ ՊԾՄ—1 մեքենայում: Այնուհետև ախտահանման ցեխի հատուկ բաժանմունքում բարձր ջերմաստիճանի տակ սերմացուն չորացվում է, անմիջապես սառուցվում, մասսամբ տեսակավորվում և ցանքի համար պատրաստ վիճակում լցվում պարկերի մեջ:

Այդ բոլոր գործողությունները մեքենայացված են և բոլորը միասին տեսում են մաս կես ժամ:

Ախտահանման ցեխի հեռանկարները համառոտ ձևով կայանում են հետեւյալում:

1. Սերմերի ախտահանման աշխատանքները՝ որոնք կուտահետեւթյուններում կատարվում են



Նկ. 9. Կենտրոնացված ախտահանման ցեխի մի տեսարան։ ախտահանված սերմերի չորացման և սառեցման ազդեկատը։

գարնանը, գարնանացանքի լարված պայմանաներում, փոխադրվում են բամբակազտիչ գործարանները, հսկողության հեշտանալու շնորհիվ մեծ չափով բարձրանում է գոմոզի դեմ ախտահանման աշխատանքների որակը, մեծ չափով թեթևանում է փեղիկական աշխատանքը:

2. Մերկացած (լինտերահանված) սերմերը ցանելու գեղքում նրանք հեշտությամբ են ջուր կլանում և ծլման բարձր էներգիա ձեռք բերելով՝ մի քանի օր ավելի շուտ են ծլում, քան սովորական լինտերահան չարված սերմերը: Բարձրանում է նույնպես սերմերի ընդհանուր ծլունակությունը: Այդ բոլորի շնորհիվ, վերջին հաշվով, այդպիսի սերմերով կատարված ցանքը նոսր չի լինում և ի հաշիվ լինտերահանման մինչև 10-ից 15 տոկոս և ավելի բարձրանում է նրանց բերքատվությունը:

3. Մերկացած սերմերը հնարավորություն են տալիս հատուկ շարքացաներ կառուցելով անցնել բնացանի և շախմատային ցանքի: Դրա շնորհիվ մոտ 50⁰/0-ով սերմի տնտեսում կկատարվի և մեծ չափով կթեթևանա նոսրացման համար բանվորական ուժի պահանջը:

4. Մերկացած սերմերը ախտահանման ցեխում հեղառությամբ կարող են տեսակավորման ենթարկվել՝ նրանց տեսակաբար կշռի հիման վրա, իսկ այդպիսի տեսակավորումը հետեւյալ հեռանկարներն ունի:

ա) Կջոկլին և կլսոտանվեն ցանքի համար բոլոր չմշկված, նվազ սերմերը, ինչպես նաև վիլտով ուժեղ հիվանդացած լույսելից, գոմոզով և սնկային հիվանդություններով վարակված կնգուղներից ստացված սերմերը, քանի որ վերջիններս այս կամ այն չափով փոքր տեսակաբար կշռու ունեն համեմատած առողջ բույսերի սերմերի հետ:

բ) Տեսակաբար կշռի վրա հիմնված տեսակավորումը խոշոր գեր կարող է խաղալ բամբակի սերմաբուծության մեջ՝ լավագույն տնտեսական համակություններով սերունդներ ստանալու համար:

5. Ախտահանման ցեխը միաժամանակ հնարավորություն է տալիս պայքարելու կարանտինային այնպիսի վնասատուների դեմ, որոնք կարող են տարածվել նաև վնասված սերմերի օգնությամբ (վարդագույն որդը, մալվայի ցեց և այլն):

Բացի գրանից, մերկացած սերմերի կարանտինաւ-
յին հսկողությունն զգալի չափով կհեշտանա:

Վերն ասածներից պարզ է դառնում, որ
կենտրոնացված ախտահանման ցեխի աշխատանք-
ները ոչ թե միայն գոմով հիվանդության դեմ
են ուղղված, այլ դա փաստորեն մի ցեխ է, որը
լավացնում է բամբակի հունդի առհասարակ
սերմային հատկությունները:

Այդպիսով մենք տեսնում ենք, որ ախտա-
հանման ցեխի կազմակերպումն զգալի բեկում
կմտցնի բամբակագործության ազբուեխնիկայի
սերմաբուծության և մեքենայացման ասպարե-
զում և խիստ չափով կրաքացնի բամբակի
ցանքերի բերքատվությունը:



ԹՈՒՍՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

կչ	
Գոմով հիվանդությունը և նրա պատճառած անտե- սական վնասը	3
Հիվանդության արտաքին նշանները	6
Գոմովի հարուցիչը և արտաքին պայմանների աղ- դեցությունը հիվանդության վրա	13
Հիվանդության աարեցարի փոխանցման ուղի- ները	17
ա) Գոմովի փոխանցումը սերմերով	18
բ) Գոմովի փոխանցումը զաշտում հիվանդ բույ- սերի մնացորդներով	21
Ազբուեխնիկական հախազգուշական միջոցառում- ները գոմովի դեմ պայքարելու գործում	25
Սերմերի ախտահանումը գոմովի դեմ	29
Սերմերի ախտահանումը փորմալինով	30
ա) Ախտահանումը ձեռքով	36
բ) Ախտահանումը „ΠΥՄ-1“ մեքենայով	39
Ախտահանված սերմերի հետագա վարակման դեմ առնելու նախազգուշական միջոցները	44
Սերմերի ախտահանումը պղնձի արջասպի լուծույ- թով	45
Սերմերի կենտրոնացված ախտահանումը բամբակա- զտիչ գործարանների ախտահանման ցեխում .	48

2284

2013

Պատ. Խմբագիր
Զ. Գ. Սուջյան

Վե 1832 Պատվեր 189. Տիրաժ 2000. Տպագրա-
կան Յ¹/₂ մամ. Հեղին. 1 մամուլ. Մեկ մամու-
լում 17280 նշան. Ստորագրված է տպագրու-
թյան համար 2/IV—42 թ.

Հայպետհրատի տպարան, Երևան, Անինի 65



ԴԻՆԸ և ՈՒԽԱ.

Ա. Ա. ԲԱԲԱՅԻ
ГОММОЗ ԽЛОПЧАТИКА
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1942